



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)  
N 7(8) 2009թ. մայիսի 21- հունիսի 20

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ..... 3

1.1 Օրենքներ ..... Error! Bookmark not defined.

1.2 ՀՀ կառավարության որոշումներ..... 3

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ ..... 5

2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ ..... 8

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ..... 9

3.1 Կառուցվածք և գործառույթներ..... 9

3.2 Ծրագրեր և կատարողականություն ..... 9

3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների.....10

3.4 Միջազգային համագործակցություն..... 11

3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում ..... 11

3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն..... 11

3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր..... 12

**1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ<sup>1</sup>**

**1.2 ՀՀ կառավարության որոշումներ**

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 27-ի N1561-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	04 հունիսի, 2009թ., 621-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 31 (697), 17.06.2009թ.
Ուժի մեջ է.	18 հունիսի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը հսկիչ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցները հատկացվում են հարկային մարմնի ղեկավարի գրավոր թույլտվությամբ՝ վերադաս հարկային մարմնի ֆինանսահաշվային կառուցվածքային ստորաբաժանման կողմից:

Որոշմամբ սահմանվել է, որ հսկիչ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցները կարող են հատկացվել նաև հարկային տեսչության պետի գրավոր թույլտվությամբ՝ հարկային տեսչության հաշվապահական հաշվատման վարման լիազորություններ իրականացնող պաշտոնատար անձի կողմից:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 22-ի N 844 որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	14 մայիսի, 2009 թ., 542-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 27 (693), 27.05.2009թ.
Ուժի մեջ է.	6 հունիսի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

“Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության որոշ տեսակների լիցենզավորման կարգերը հաստատելու մասին” ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 22-ի թիվ 844 որոշման մեջ սահմանվել են մաքսային հսկողության տարածքի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը, մաքսային միջնորդական (բրոքերային) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը, ինչպես նաև կատարվել են որոշ լրացումներ և փոփոխություններ մաքսային օրենսգրքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության որոշ տեսակների լիցենզավորման արդեն գործող կարգերում, մասնավորապես՝ մաքսային պահեստում մաքսային հսկողության ներքո և ազատ մաքսային պահեստում ապրանքների պահպանության գործունեությունների լիցենզավորման կարգում, մաքսային փոխադրողի գործունեության լիցենզավորման կարգում, ինչպես նաև անմաքս առևտրի խանութներում մաքսային հսկողության ներքո ապրանքների իրացման գործունեության լիցենզավորման կարգում:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 7-ի N 941-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	14 մայիսի 2009թ., 527-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 27(693), 27.05.09.
Ուժի մեջ է.	28 մայիսի 2009թ.

<sup>1</sup> Դիտարկվել և հիմք են ընդունվել.

- ՀՀ պաշտոնական տեղեկագրեր. թիվ 20(686) 22 ապրիլի 2009թ. -թիվ 26(692), 20 մայիսի 2009թ.
- ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրեր, թիվ 16 (334), 4 մայիսի 2009թ. -թիվ 17(335), 15 մայիսի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Սույն որոշմամբ հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 7 -ի N 941-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին որոշումը, համաձայն որի ՀՀ կառավարության 07.08.08թ. ‘ՀՀ հարկ ային վարչարարության ռազմավարության 2008 -2011թթ. ծրագիրը հաստատելու մասին’ N 941 -Ն որոշման մեջ կատարվել են հետևյալ փոփոխությունը և լրացումները. որոշման վերնագրում Ֆհարկային՝ բառը փոխարինվել Տպետական եկամուտների (հարկային և մաքսային)՝ բառերով.

որոշումը լրացվել է նոր ` N 4 հավելվածով, որով հաստատվել է ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012 թվականների ծրագիրը.

ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2009 -2012թթ. ծրագրով ընդունվել է 7 առանցքային սկզբունք, որոնք հետևողականորեն իրականացնելու արդյունքում մաքսային ծառայությունը կլինի աննկատ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար և տեսանելի՝ ոչ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների կամ մաքսանենգության փորձ կատարողների համար: Մաքսային մարմինը այս սկզբունքների հիման վրա, ըստ կատարման ժամկետների և պատաս - խանատուների, կհաստատի միջոցառումների ժամանակացույց՝ հետագայում գնա հատելով կոնկրետ գործողության իրականացման արդյունքը: Մաքսային ծառայությունը հետևողական է լինելու բոլոր 7 սկզբունքների իրագործման գործում՝ մաքսային վարչարարության բարեփոխումներում ունենալով հաջողության հետևյալ գրավականները.

1. Ունակ, հաստատակամ և դինամիկ առաջնորդում:
2. Շարունակական քաղաքական կամք և աջակցություն:
3. Օրենսդրություն, որը հիմք պետք է ծառայի բարեփոխումների իրականացման համար:
4. Համարժեք ռեսուրսներ, ֆինանսավորում:
- 5.Պետության, հասարակության և այլ շահագրգիռ կողմերի մասնակցություն և օժանդակություն:
6. Բարեփոխումները մշակող և իրականացնող օղակների միջև համագործակցություն:

Փաստաթուղթ.	“ՀՀ ԿԱ ՊԵԿ նյութական խրախուսման և համակարգի զարգաց - ման ֆոնդից նպատակային ծախսեր կատարելու մասին” ՀՀ կա - ռավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	14 մայիսի, 2009թ., N560-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 28 (694), 03.06.2009թ.
Ուժի մեջ է.	26 մայիսի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ սահմանվում է, որ 2009-2011 թվականների պետական եկամուտների վարչարարության բարեփոխումների միջոցառումների ծրագրի ֆինանսավորումը 2009 թվականին իրականացվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ նյութական խրախուսման և համակարգի զարգաց ման ֆոնդի միջոցների հաշվին՝ 500հզ. ԱՄՆ-ի դոլարի չափով:

Փաստաթուղթ.	“ՀՀ ԿԱ ՊԵԿ առաջնահերթ բարեփոխումների գործողությունների պլանը հաստատելու մասին” ՀՀ վարչապետի որոշում
Ամսաթիվը և համարը.	29 մայիսի, 2009թ., N447-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 29 (695), 10.06.2009թ.
Ուժի մեջ է.	29 մայիսի 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ առաջնահերթ բարեփոխումների գործողությունների պլանը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ֆինանսների նախարարը, ՀՀ էկոնոմիկայի նախարարը և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը մ ինչև 2009թ.

դեկտեմբեր ամիսը պետք է ներկայացնեն գործողությունների պլանի իրականացման ծախսերի գնահատումը, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշման նախագիծ գնահատված ծախսերի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ՝ ներառյալ ՀՀ պետական բյուջեից, ՀՀ ԿԱ ՊԵԿ արտաբյուջետային միջոցներից և դոնոր կազմակերպություններից:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 27-ի N1561-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	4 հունիսի, 2009թ., N621-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°31(697), 17.06.2009թ.
Ուժի մեջ է.	18 հունիսի, 2009թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ կատարվել են որոշ փոփոխություններ, մասնավորապես

1. 4-րդ կետը ձևակերպվել է հետևյալ կերպ.

“Օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր հսկիչ գնում կատարելու համար տրված գրավոր հանձնարարագրի և այդ հանձնարարագրին համապատասխան ապրանքների քանակի ու պահանջվող գումարի հաշվարկի հիման վրա հարկային մարմնի ղեկավարին կամ հարկային տեսչության պետին է ներկայացվում միջնորդագիր՝ հսկիչ գնում կատարելու նպատակով անհրաժեշտ դրամական միջոցների հատկացման համար”:

2. 5-րդ կետը ձևակերպվել է հետևյալ կերպ.

“Հսկիչ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցները հատկացվում են հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի գրավոր թույլտվությամբ՝ վերադաս հարկային մարմնի ֆինանսահաշվային կառուցվածքային ստորաբաժանման կամ հարկային տեսչության հաշվապահական հաշվառման վարման լիազորություններ իրականացնող պաշտոնատար անձի կողմից”:

3. 6-րդ կետը ձևակերպվել է հետևյալ կերպ.

“Հսկիչ գնման համար անհրաժեշտ դրամական միջոցներ ստանալու համար ֆինանսահաշվային կառուցվածքային ստորաբաժանում կամ հարկային տեսչության հաշվապահական հաշվառման վարման լիազորություններ իրականացնող պաշտոնատար անձին են ներկայացվում միջնորդագիրը՝ հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի թույլտվությամբ, հանձնարարագրի պատճենը, հսկիչ գնում կատարելու համար գումար ստացողի անունը, ազգանունը և պաշտոնը”:

Փաստաթուղթ.	“Ավելացված արժեքի հարկի մասին” ՀՀ օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը հաստատելու մասին
Ամսաթիվը և համարը.	30 ապրիլի, 2009թ., N600-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°29(695), 10.06.2009թ.
Ուժի մեջ է.	11 հունիսի, 2009թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է “Ավելացված արժեքի հարկի մասին” ՀՀ օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը՝ համաձայն հավելվածի:

### 1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ.	“ՀՀ հարկային տեսչության 04.03.1999թ. N01/13 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	15 ապրիլի, 2009թ., N838-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 18 (336),

	01.06.2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Հրամանով հաստատվել է ՀՀ հարկային տեսչության 04.03.1997թ. «Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին» N 01/13 հրամանում կատարվող փոփոխությունները և լրացումները՝ համաձայն հավելվածի:

Փաստաթուղթ.	“ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 17.12.1997թ. N16-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	15 ապրիլի, 2009թ., N839-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 18 (336), 01.06.2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Հրամանով սահմանվում է ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 17.12.1997թ. N16-Ն հրամանով հաստատված հավելվածը 2-րդ կետից հետո լրացնել 2.1 կետով՝ “եզրակացություն հարկային մարմնի միջոցով պետական բյուջե հավաքագրվող պարտադիր վճարների (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) մասով հարկ վճարողի հարկային պարտավորությունների դիմաց հաշվացման ենթակա գումարի առկայության և դրա հաշվին հարկային մարմնի միջոցով պետական բյուջե հավաքագրվող հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում կատարելու մասին ( Ձև N2.1)” բովանդակությամբ:

Փաստաթուղթ.	Առանձին հարկ վճարողների 2008-2009 թվականների շահութահարկի և եկամտահարկի նվազագույն և առավելագույն գումարների հաշվարկման վերաբերյալ
Ամսաթիվը և համարը.	7 մայիսի, 2009թ., N4
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 18 (336), 01.06.2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Պաշտոնական պարզաբանմամբ սահմանվում է 2008-2009 թվականների շահութահարկի և եկամտահարկի նվազագույն և առավելագույն գումարների հաշվարկման կարգը : Մասնավորապես՝ 2008թ. հունվարի 1-ից, օրենսդրական փոփոխությունների հետևանքով, պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած և 2008թ. ընթացքում շահութահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող և շահութահարկ վճարող հանդիսացող առևտրային կազմակերպությունների 2008թ. տարեկան շահութահարկը, իսկ 2008թ. ընթացքում եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող և եկամտահարկ վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերի 2008թ. տարեկան եկամտահարկը չի կարող պակաս լինել համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 10% -ից:

2009թ. ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված և 2009թ. ընթացքում շահութահարկին և եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող հանդիսացող համապատասխանաբար կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի 2009թ. տարեկան շահութահարկը և եկամտահարկը չի կարող պակաս լինել համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների)

2%-ից և ավելի՝ համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 10%-ից:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի N1595-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում և 2006 թվականի N471-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	14 մայիսի, 2009թ., 537-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 27 (693), 27.05.2009թ.
Ուժի մեջ է.	01 հուլիսի 2009թ.

### Համառոտ նկարագիր

Որոշման համաձայն կատարվել են փոփոխություններ և լրացումներ

1. 2005թ. օգոստոսի 4-ի “ՀՀ պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման կարգը սահմանելու մասին” N1595-Ն մեջ, համաձայն որի,

1.1 5-րդ կետի “ա” ենթակետը ձևակերպվել է հետևյալ կերպ. ՀՀ պետական կառավարման մարմինների տեղեկատվական համակարգերում կիրառվում են միայն լիազոր մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված հավաստագրման կենտրոնների կողմից տրամադրված էլեկտրոնային թվային ստորագրությունների հավաստագրերը և դրանց համապատասխանող էլեկտրոնային թվային ստորագրությունների ստեղծման ապարատային և (կամ) ծրագրային միջոցները:

1.2 5-րդ կետը լրացվել է նոր “գ” ենթակետով. հարկային մարմնի տեղեկատվական համակարգում “Հարկային ծառայության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկային գաղտնիքի շարքը դասվող տեղեկություն պարունակող կամ կազմող էլեկտրոնային փաստաթղթերի նկատմամբ կիրառվում է նույն կետի «ա» ենթակետով սահմանված կարգով հավատարմագրված հավաստագրման կենտրոնների կողմից տրամադրված էլեկտրոնային թվային ստորագրությունների հավաստագրերը և դրանց համապատասխանող էլեկտրոնային թվային ստորագրությունների ստեղծման ապարատային և (կամ) ծրագրային միջոցները, եթե էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցները հնարավորություն են տալիս էլեկտրոնային փաստաթուղթն ստորագրող անձին նույնացնելու ըստ անձնագրային տվյալների և սոցիալական քարտի համարի, իսկ դրանց բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի համարի:

2. 2006թ. փետրվարի 16-ի “Հարկային և պարտադիր այլ վճարների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները փոստի միջոցով հարկային մարմին ներկայացնելու պարզեցված ընթացակարգը հաստատելու մասին” N 471-Ն որոշման մեջ, համաձայն որի որոշման նախաբանը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. “Հիմք ընդունելով “Հարկերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի “գ” կետը և “Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի “Հարկային հավաքագրումներում ինքնագնահատման համակարգի ներդրման ռազմավարական միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին” N731-Ն որոշման հավելվածի 5-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է կայացրել հաստատել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկային և պարտադիր այլ վճարների հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները փոստի միջոցով

հարկային մարմին ներկայացնելու պարզեցված ընթացակարգը՝ համաձայն N 1 հավելվածի:  
 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկային և պարտադիր այլ վճարների հաշվետվությունները, հաշվարկները, ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը, այլ փաստաթղթերը և տեղեկու թյունները էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու կարգն ու պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:

Փաստաթուղթ.	“1977թ. մարտի 1-ին Նյու Յորքում ստորագրված՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին համաձայնագրի արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով” ՀՀ սահմանադրական դատարանի որոշում
Ամսաթիվը և համարը.	8 հունիսի, 2009թ., ՄԴՈ 808
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°31(697), 17.06.2009թ.
Ուժի մեջ է.	Հրապարակման պահից

**Համառոտ նկարագիր**

Արձանագրությունը ստորագրվել է 1977 թ. մարտի 1-ին Նյու Յորքում: Արձանագրությամբ սահմանվում են գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի, արվեստի գործերի և կրթական, գիտական կամ մշակութային բնույթի հավաքածուների առարկաների, տեսալսողական նյութերի, գիտական գործիքների և սարքավորումների, կույրերի և այլ արատներով անձանց համար նախատեսված առարկաների, սպորտային սարքավորումների, երաժշտական գործիքների և այլ սարքավորումների, ինչպես նաև գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար օգտագործվող նյութերի և մեքենաների ցանկը: ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին համաձայնագրի արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ սահմանադրությանը:

Փաստաթուղթ.	“2009թ. մարտի 6-ին Երևանում ստորագրված՝ ՀՀ կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով” ՀՀ սահմանադրական դատարանի որոշում
Ամսաթիվը և համարը.	8 հունիսի, 2009թ., ՄԴՈ 809
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°31(697), 17.06.2009թ.
Ուժի մեջ է.	Պրապարակման պահից

**Համառոտ նկարագիր**

Համաձայնագիրը ստորագրվել է 2009թ. մարտի 6-ին Երևանում: Համաձայնագրի նպատակն է մաքսային իրավախախտումների դեմ պայքարում համատեղ և արդյունավետ միջոցների մշակման համար երկու երկրների միջև համապատասխան իրավական հիմքեր ստեղծելը: ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ ՀՀ կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին համաձայնագրի մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ սահմանադրությանը:

**2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ**

Փաստաթուղթ.	“Պետական տուրքի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	28 ապրիլի, 2009թ., ՀՕ-107-Ն



Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 27 (693), 27.05.09թ.
Ուժի մեջ է.	6 հունիսի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքի փոփոխությամբ հանվել է կնիքի և դրոշմակնիքի պատ րաստման թույլտվություն տալու համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերը:

Փաստաթուղթ.	“Պետական տուրքի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	28 ապրիլի, 2009թ., ՀՕ-108-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 27 (693), 27.05.09թ.
Ուժի մեջ է.	6 հունիսի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքով սահմանվել է օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն այցելության մուտքի և բազմակի մուտքի արտոնագիր տալու համար պետական տուրքի տարբերակված դրույքաչափեր՝ ՀՀ -ում գտնվելու օրերի քանակից կախված:

Օրենքի փոփոխությամբ տարեկան պետական տուրքի դրույքաչափեր են սահմանվել զբոսաշրջության բնագավառում լիցենզիաներ տրամադրելու և հյուր անոցային տնտեսության օբյեկտների որակավորման համար:

Փաստաթուղթ.	“Պետական տուրքի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	28 ապրիլի, 2009թ., ՀՕ-112-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 28 (694), 03.06.09թ.
Ուժի մեջ է.	13 հունիսի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքում կատարված փոփոխությունը պայմանավորված է “Հեռուստատեսության և ռադիոյի մասին” ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ, համաձայն որի, հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման արտոնագիր (լիցենզիա) տրամադրվում է օրենքով սահմանված կարգով պետական տուրք մուծելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Օրենքի փոփոխությամբ սահմանվել են պետական տուրքի դրույքաչափեր հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման արտոնագիր ստանալու համար:

**3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ**  
**3.1 Կառուցվածք և գործառույթներ**

**3.2 Ծրագրեր և կատարողականություն**  
**3.2.1 Ծրագրեր և կատարողականություն / հարկային ծառայության մասով/**

Համառոտագրի այս ժամանակահատվածի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքներ .

1. Հարկային օրենսդրության վերաբերյալ հաճախ հանդիպող հարցերի համախմբման և օգտագործման տվյալների բազայի (“գիտելիքների շտեմարանի”) հայեցակարգի (“ճարտարապետության”) մշակում /ծրագրի 56-րդ միջոցառում/

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 04.06.09թ. N 1349 -Ա հրամանով հաստատվել է հարկային և հարկից օրենսդրության, ինչպես նաև հարկային վարչարարության վերաբերյալ հաճախ հանդիպող հարցերի տվյալների բազայի ձևավորման և օգտագործման ընթացակարգը, համաձայն որի կանոնակարգվում է հարկային վարչարարության վերաբերյալ հաճախ հանդիպող հարցերի և դրանց պատասխանների տվյալների բազայի ձևավորման և օգտագործման գործընթացը: Ընթացակարգի նպատակը հարկ վճարողների հարկային և հարակից օրենսդրության, ինչպես նաև հարկային վարչարարության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումն է:

2. Նոր ստեղծված հարկ վճարողներին՝ օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգի մշակում /ծրագրի 52 -րդ միջոցառում/

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 16.06.09թ. N 1411 -Ա հրամանով հաստատվել է նոր ստեղծված հարկ վճարողներին՝ օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգը: Համաձայն կանոնակարգի օժանդակման այցելությունը՝ նոր ստեղծված հարկ վճարողին իր հաշվառման հարկային տեսչության պետի բանավոր հանձնարարությամբ, հարկ վճարողի կողմից հարկային տեսչության հայտնաձև գտնվելու վայր հարկային տեսչության հարկ վճարողների սպասարկման բաժնի իրավասու աշխատակցի կողմից օժանդակության և սպասարկման նպատակով կատարվող այցն է: Այցի նպատակը հարկ վճարողներին բարձրորակ սպասարկմամբ, բացատրական աշխատանքների իրագործման միջոցով իրազեկվածության մակարդակի բարձրացումն է: Նախատեսվում է նոր ստեղծված հարկ վճարողներին առաջին վեց ամսվա ընթացքում կատարել առնվազն 2 այցելություն:

3. ՀԴՄ-ի շահագործման հետ կապված հասարակության վերահսկողության մեխանիզմի մշակում՝ ներառյալ առաջարկելով քաղաքացիների անձնական շահագրգռվածության գործոնը (որպես օրինակ, կարող է ներդրվել «վիճակախաղի» գաղափարը)

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 17.06.09թ. N 1413 -Ա հրամանով հաստատվել է վիճակահանության արդյունքում հսկիչ-դրամարկղային մեքենաների չշահած կտրոնների խմբաքանակնե րի համար բռնուսի հաշվարկման և միջնորդագրերի տրամադրման կարգը, որով կանոնակարգվում է ՀՀ կառավարության ”Հարկային վարչարարության օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզավճարների տրամադրման կարգը հաստատելու մասին” N 1330 -Ն որոշմամբ սահմանված կարգով անցկացված վիճակահանության արդյունքում հսկիչ -դրամարկղային մեքենաների չշահած կտրոնների տիրապետող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեսչություն ներկայացրած ՀԴՄ կտրոնների խմբաքանակների ընդունման, դրանց կազմմանը ներկայացրած պահանջների նկատմամբ հսկողության, բանկերից բռնուսի ստացման համար ֆիզիկական անձանց միջնորդագիր տրամադրելու ընթացքում առաջացող հարցերը:

### 3.2.2 Ծրագրեր և կատարողականություն/ մաքսային ծառայության մասով/

Մեր երկիրը, կարևորելով Եվրոպական չափանիշներին ինտեգրմանն ուղղված գործընթացները, նախաձեռնություն է ցուցաբերել հրատարակել Եվրոպական Հանձնաժողովի “Օրինակելի մաքսային ծառայություն” /Customs blueprint/ ձեռնարկի հայերեն տարբերակը և այս միջոցառումը հաստատվել է նաև ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 14-ի թիվ 527-Ն որոշմամբ հաստատված Մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012թթ. ծրագրում և նախատեսված էր ավարտին հասցնել 2009 թվականի երկրորդ եռամսյակում:

Այս ձեռնարկում շարադրված են Եվրոպական լավագույն փորձի վրա հիմնված հստակ չափանիշները: Այն պրակտիկ ուղեցույց է, ներառում է 22 առանցքային ոլորտ, որոնք բխում են Եվրամիության լավագույն փորձից և որոնց հետ համեմատելով ներկայիս իրավիճակը, հնարավորություն կընձեռնվի չափել առկա կարողությունները, դրանք պլանավորել մաքսային բարեփոխումների ներկա գործընթացներում և աշխատանքները էլ ավելի արդյունավետ դարձնել մեր երկրի մաքսային օրենսդրությունը Եվրամիության օրենսդրությանն ու ստանդարտներին համապատասխանեցնելու հարցում: Սույն ձեռնարկը կօգնի նաև ճիշտ ուղղորդել միջազգային կազմակերպություններից ակնկալվող տեխնիկական օժանդակությունը:

Վերոնշյալ՝ “Օրինակելի մաքսային ծառայություն” /Customs blueprint/ ձեռնարկի հրատարակման համար թարգմանչական աշխատանքները ավարտվել են և նյութը գտնվում է հրատարակման փուլում, իսկ ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է մաքսային ծառայության ինտերնետ կայքում:

### 3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

21.05.2009թ. -ից մինչև 20.06.2009թ. -ը ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել է ընդամենը թվով 15 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 47 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 21.05.2009թ.-ից մինչև 20.06.2009թ.-ը քննարկվել է ընդամենը թվով 17 բողոք, որից.

- բավարարվել է մասնակի 1 բողոք,
- բավարարվել է 2 բողոք,
- մերժվել է 14 բողոք:

#### **3.4 Միջազգային համագործակցություն**

Համաձայն “ՀՀ միջազգային պայմանագրերի մասին” ՀՀ օրենքի, հունիս ամսին ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների համաձայնեցմանն են ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Նիդերլանդների Թագավորության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին”, “Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելգիայի Թագավորության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին” և ”ՀՀ կառավարության և Ավստրիայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին” համաձայնագրերի նախագծերը:

#### **3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում**

##### **Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային և մաքսային ծառայությունների մասով/**

2009թ. մայիսի 25-ին և հունիսի 23-ին կայացել են ՊԵԿ հարկային ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով հերթական մրցույթները, որոնց մասնակցելու դիմում էին ներկայացրել 312 քաղաքացիներ: Մրցույթների արդյունքում համալրվել է հարկային ծառայության 70 թափուր պաշտոն:

2009թ. ապրիլի 3-ից ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ընթանում է հարկային ծառայողների ատեստավորման գործընթացը: Մինչև հունիսի 20-ը ատեստավորմանը մասնակցել են 805 հարկային ծառայողներ, որոնցից 193 հարկային ծառայողներ հարկային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: Նրանցից 95-ը ազատվել են աշխատանքից, իսկ 98-ը՝ իջեցվել զբաղեցված պաշտոններից:

#### **3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն**

##### **3.6.1 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն / հարկային ծառայության մասով/**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության “Թեժ գիծ”-ը պաշտոնապես գործում է 2008թ. հոկտեմբերի 14-ից: 2009թ. հունիս ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՕ “Թեժ գծով” ստացվել է 137 բողոք և առաջարկություն: Բողոքների հիմնական մասն առնչվել է “Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին” ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին: Չանգահարողների մեծ մասի հարցումները հիմնականում վերաբերել են պարզևավճարների տրամադրման նոր կարգին, ժամկետներին ու պայմաններին, հունիսի 5-ին կայացած վիճակահանությանը, շահած կտրոններին և թվերին, ինչպես նաև դրանց հետ կապված բազմաթիվ այլ հարցերի: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են ՏՀՏ-ների համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

##### **3.6.2 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն /մաքսային ծառայության մասով/**

Մայիսի 20-ից մինչև հունիսի 20-ը “Թեժ գծով” ստացվել է մոտ 450 զանգ: Չանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել:

Չանգահարողներին նաև հիմնականում հետաքրքրել են ավտոմեքենաների մաքսազերծման հետ կապված հարցերը, դրանց մաքսային արժեքի որոշման ընթացակարգերը և այլն:

Նշված ժամանակահատվածում արձանագրվել է 6 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են ապրանքի մաքսային արժեքի որոշմանը, ավտոմեքենաների գնահատմանը, ինչպես նաև արտահանման թույլտվությանն առնչվող հարցերին: Որոշ բողոքներ էլ առնչվել են արտերկրից ուղարկված ծանրոցների մաքսազերծման հետ կապված խնդիրներին:

Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ էլ հրավիրել են ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան

ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

Մայիսի 20-ից մինչև հունիսի 20-ն արձանագրված բոլոր բողոքներին արձագանքվել է:

**3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր**

**3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր**

**3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր**

	Ցուցանիշ	2008թ.		2009թ.		Աճի տեմպը%	
		հունվար-մայիս	մայիս	հունվար-մայիս	մայիս	հունվար-մայիս	մայիս
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված մաքսային եկամուտներ (մլն դրամ)	100 845	26 610	79 057	15 375	78.4	57.8
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը(մլն դրամ), այդ թվում՝ արտահանում (մլն դրամ)	618 285	140 517	471 573	96 882	76.3	68.9
	ներմուծում (մլն դրամ)	129 703	26 053	86 390	20 476	66.6	78.6
	ներմուծում (մլն դրամ)	488 582	114 465	385 183	76 406	78.8	66.8
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	15 700	4 520	11 188	2 687	71.3	59.4